

Արձանագրություն N1

Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

08.09.2017թ. նիստի

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ֆակուլտետի խորհրդի 2016- 2017 ուս տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 28-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանը շնորհավորեց գիտխորհրդի անդամներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ և մաղթեց արդյունավետ աշխատանք: Դեկանը ներկայացրեց մագիստրոսական ծրագրերի դիմորդների քանակական պատկերը, որն այնքան էլ նպաստավոր չէ ֆակուլտետի համար և հորդորեց ամեն ջանք գործադրել մասնագիտությունները ավելի գրավիչ դարձնելու համար: Դեկանը ևս մեկ անգամ հիշեցրեց, որ դասագրքերի և ձեռնարկների ձեռքբերումը կամավոր հիմունքներով պետք է կատարվի և բացառապես համապատասխան գրախանութներից, այլ ոչ թե ամբիոններից և դասախոսներից: Ուսանողները կարող են օգտվել նաև գրադարանից:

Այնուհետև անգլիական բանասիրության, գերմանական բանասիրության և արտասահմանյան գրականության ամբիոնների վարիչները ներկայացրեցին անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց մեկ կիսամյակով անվանական կրթաթոշակի ներկայացնել հետևյալ ուսանողներին.

1. Գասպարյան Գրիշա Գագիկի /անգլ. լեզու և գրակ., մագ. 1- կուրս/ - Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ:
2. Զարգարյան Վահե Գևորգի /գերմ., 4-րդ կուրս/ - Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ,
3. Մարկոսյան Արմինե Վարդանի /արտ. գրակ. մագ. 2-րդ կուրս/ - Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ:

2. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 2017- 2018 ուս. տարվա աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում հաստատել Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 2017- 2018 ուս. տարվա աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ. Ղազարյանը խոսք խնդրեց անդրադառնալու համար ֆակուլտետի ուսխորհրդի աշխատանքներին : Նա նշեց, որ ֆակուլտետի ուսխորհուրդը իր գործունեությամբ պետք է նպաստի դասախոսների և ուսանողների միջև նորմալ աշխատանքային հարաբերությունների

հաստատմանը, ֆակուլտետի հեղինակության բարձրացմանը: Ուսխորհրդի անդամ Ամայա Սողոմոնյանը նշեց, որ հիմնականում համաձայն է Ռ. Ղազարյանի հետ, որ անհրաժեշտ է վստահության մթնոլորտ ստեղծել ուսանող-դասախոս հարաբերություններում և որ ուսխորհուրդը ձգտում է իր կազմում ընդգրկել լավագույն ուսանողների: Դեկան Ս. Աբրահամյանը նշեց, որ իրոք կարևոր է բարձր պահել համալսարանի անունը և համալսարանի ուսանողի պատիվը, և որ ուսանողները իրենց կողմից բարձրաձայնված խնդիրները պետք է աշխատեն լուծել նախ և առաջ ֆակուլտետի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ: Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Գասպարյանը, արձագանքելով տվյալ հարցին, նշեց, որ ուսխորհրդի նպատակը պետք է լինի ոչ թե ընդհանրապես ֆակուլտետին հակադրվելը, այլ համագործակցելը և հույս հայտնեց, որ ֆակուլտետի և ուսխորհրդի համատեղ ջանքերով այսուհետև լուծում կտրվի բոլոր խնդրահարույց հարցերին:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ

Որոշեցին՝

- Հրատարակության երաշխավորել Ռոմանական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Աննա Կուբանյանի «Աստված և Սատանա բաղադրիչներով դարձվածքները իսպաներենում և հայերենում» մենագրությունը:
- Հաստատել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ Նարե Զոբանյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Դատավճիռը որպես տեքստ և դրա թարգմանության սկզբունքները /անգլերեն նյութի հիման վրա, հայերենի և ֆրանսերենի զուգադրությամբ/»՝ Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ /անգլերեն/» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ, դոց. Ա. Խաչատրյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

08 սեպտեմբերի 2017 թ.